ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒ
КРУПНЫЙ НАЛОГОПЛАТЕЛЬЩИК
MAJOR TAXPAYER

«ՅՈՒՄԱԿՍ» ՍՊԸ • 0002 Երևան, Դեմիրճյան 36, # 1ա ООО "ЮМАКС" • 0002 Ереван, ул. Демирчяна 36, # 1а "UMAKS" LLC • 0002 Yerevan, 36 Demirchyan st., # 1 a

N 87

28 սեպտեմբեր 2016 թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
պարոն Վահան Մարտիրոսյանին
Յումակս ՍՊԸ –ի տնօրեն
Միխաիլ Յուխանանից

Հարգելի պարոնայք՝ Կապի և տրանսպորտի նախարարության աշխատակիցներ, վերլուծելով Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության թիվ 04/16.1/12515 – 16 առ 23.09.2016 թ. գրությունը մենք եկանք այն եզրակացության, որ Դուք հստակ չեք տարբերակում ***Միջազգային փոստային օպերատորի, Փոստային օպերատորի, Սուրհանդակային ծառայության և Միջազգային սուրհանդակային ծառայության հասկացողությունները:***

Հայաստանի Հանրապետությունում միջազգային փոստային օպերատոր է հանդիսանում Հայփոստ ՓԲԸ – ն և միայն Հայփոստ ՓԲԸ – ն, որի փոխհարաբերությունները միջազգային այլ փոստային կազմակերպությունների հետ կարգավորվում են միմիայն Փոստային կոնվենցիայով:

Փոստային կապի օպերատորի գործունեությունը և սուրհանդակային ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է Փոստային կապի մասին ՀՀ օրենքով:

Միջազգային սուրհանդակային ծառայությունը կարգավորվում է Վարշավայի կոնվենցիայով և Փոստային կապի մասին ՀՀ օրենքով:

ստացա 28.09.16թ.

Յումակս ՍՊԸ-ն՝ հանդիսանալով DHL International ընկերության գործակալը Հայաստանում, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար իրականացնում է առաքանիների փոխադրումը դեպի ՀՀ օդային եղանակով:

Քննարկենք ընկերության գործընթացը քայլ առ քայլ՝

1. ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ծանրոցն առաքվել է մինչև Արմենիա միջազգային օդանավակայաններ (Վարշավայի կոնվենցիա):

2. Ձննման նպատակով Մաքսատունը պահում է բեռը (ՀՀ մաքսային օրենսդրություն):

3. Յումակս ՍՊԸ –ի սուրհանդակը հասցեատիրոջն է առաքում մաքսային ձևակերպման համար բոլոր անհրաժեշտ առաքման փաստաթղթերը, ինչը հավաստում է հասցեատիրոջ կողմից ստորագրված առաքման թերթիկը (Փոստային կապի մասին ՀՀ օրենք):

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք պարզաբանել հետևյալ հարցը. կարելի է արդյո՞ք համարել, որ տվյալ դեպքում համաձայն Փոստային կապի ՀՀ օրենքի Յումակս ՍՊԸ–ն լիովին կատարել է իր պարտականությունները՝ առաքանին հանձնվել է ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող հասցեատիրոջը: Եթե ոչ՝ այսինքն, Յումակս ՍՊԸ –ի սուրհանդակի կողմից առաքման թերթիքում ստորագրությամբ հասցեատիրոջն է հանձնվել մաքսային ձևակերպման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն առաքանին համարվում է չհանձնված, խնդրում ենք նշել այն իրավանորմերը, որոնք կարգավորում են տվյալ հարցը:

Հարգանքով՝

Տնօրեն՝ Մ. Յուխանան

Հեռ.: 010 586688; 091006688

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

N 01/16/14900-16

«07» 11 2016 թ.

<Յումաքս> ՍՊԸ-ի Տնօրեն
պարոն Մ.Յուխանանին

Հարգելի պարոն Յուխանան

Ի պատասխան Ձեր 28.09.2016թ. թիվ 87 և 03.11.2016թ. թիվ 116 գրությունների տեղեկացնում եմ, որ Ձեր բազմաթիվ գրություններով (21.06.2016թ. թիվ 57 և 23.08.2016թ. թիվ 80) բարձրացված նույնաբովանդակ հարցադրումներին նախարարության կողմից արդեն իսկ տրվել են պարզաբանումներ (18.07.2016թ. թիվ 04/16.1/9185-16 և 23.09.2016թ. թիվ 04/16.1/12515-16):

Ձեր գրությունով ներկայացված մեկնաբանությունները չեն բխում <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որի՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Միաժամանակ անհրաժեշտ եմ համարում նշել, որ <Հայփոստ> ՓԲ ընկերությունը ոչ թե միջազգային փոստային օպերատոր է (ինչպես նշված է Ձեր գրությունում), այլ փոստային կապի ազգային օպերատոր է՝ համաձայն ՀՀ կառավարության 16.03.2016թ. թիվ 292-Ն որոշման:

Նկատի ունենալով վերը նշվածը մեկ անգամ ևս տեղեկացնում եմ, որ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28 Հեռ.՝ (374 10) 59 00 01 , Ֆաքս՝ (374 10) 56 05 28, էլ. փոստ՝ mintranscom@mtc.am

- Փոստային և սուրհանդակային կապի ոլորտներում գործունեությունը կարգավորվում է <Փոստային կապի մասին> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 16.02.2012թ. թիվ 211-Ն և 173-Ն որոշումներով հաստատված կարգերով, ինչպես նաև ոլորտում գործող այլ իրավական ակտերով:
- <Փոստային կապի մասին> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն **փոստային առաքանի է հանդիսանում՝** հասցեագրված նամակագրական թղթակցությունը, փոստային ծանրոցները ու փոստային բեռնարկղերը, համապատասխան փաթեթավորումով տպագիր հրատարակությունները, իսկ փոստային առաքում է նշանակում՝ **փոստային առաքանու** ընդունում, մշակում, փոխադրում և **հանձնում հասցեատիրոջը:** Հետևաբար, փոստային կապի մասին օրենսդրության պահանջների կատարումն ապահովելու նպատակով հասցեատիրոջը պետք է հանձնվի **փոստային առաքանին:**

Հարկ է նշել նաև, որ <Փոստային կապի մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ Փոստային կապի գործունեության համար տրամադրված լիցենզիայի գործունեությունը կասեցվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած փոստային կապի օպերատորի գործունեության և սուրհանդակային կապի օպերատորի գործունեության կանոնակարգերով սահմանված պայմանների և պահանջների խախտման դեպքում:

Հարգանքով՝ **Վ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Կատ.Իրավաբանական վարչություն 590030

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28 Հեռ.՝ (374 10) 59 00 01, Ֆաքս՝ (374 10) 56 05 28, էլ. փոստ՝ mintranscom@mtc.am